



ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ՀԱՅ ԲԱՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ

Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն 1

**ԵՊՀ-Ի ՀԱՅ ԲԱՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԳԻՏԽՈՐՀՐԴԻ՝
2020 Թ. ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 23-ԻՆ ԿԱՅԱՑԱԾ ԱՌՑԱՆՑ ՆԻՍՏԻ**

Օրակարգում՝

1. Ուսումնական տարվա սկսման հետ կապված հարցեր:
2. Տեղեկատվություն հայոց լեզվի և հայոց լեզվի պատմության ամբիոնների կողմից՝ գիտական և գիտատեխնիկական պայմանագրային թեմաների կատարման ընթացքի մասին:
3. Ամբիոնների կողմից ներկայացվող դասագրքերի, գիտական աշխատանքների, ժողովածուների քննարկում:
4. Աշխատանքային կարգապահության հետ կապված հարցեր:
5. Ընթացիկ հարցեր:

Բացելով առցանց կայացող նիստը՝ հայ բանասիրության ֆակուլտետի դեկան պրոֆ. Ա. Ավագյանն ասաց, որ ֆակուլտետի գիտական խորհրդի 37 անդամներից առցանց նիստին մասնակցում է 26-ը, և ապահովված է անհրաժեշտ քվորումը: Նա այնուհետև ծանոթացրեց օրակարգի հարցերին, որոնց քննարկումը միաձայն ընդունվեց բաց քվեարկությամբ:

Օրակարգի **առաջին**՝ ուսումնական տարվա սկսման հետ կապված **հարցերի** առիթով ելույթ ունեցավ ֆակուլտետի դեկան պրոֆ. Ա. Ավագյանը: Նա մասնավորապես ա-

սաց, որ ուսումնական տարին, ցավոք, սկսում ենք դարձյալ առցանց ուսուցմամբ, սակայն պետք է լուրջ ջանքեր ներդնել՝ գիտամանկավարժական գործընթացը պատշաճ մակարդակի վրա պահելու համար: Այդ առիթով դեկանը որոշակի հանձնարարականներ տվեց թե՛ դեկանատին, թե՛ բոլոր ամբիոնների վարիչներին և թե՛ գիտխորհրդի մյուս անդամներին:

Օրակարգի **երկրորդ հարցի** (հայոց լեզվի և հայոց լեզվի պատմության ամբիոնների կողմից գիտական և գիտատեխնիկական պայմանագրային թեմաների կատարման ընթացքը) առիթով համապատասխան տեղեկատվությամբ հանդես եկան պրոֆեսորներ **Յու. Ավետիսյանը** և **Ա. Աբաջյանը**:

Պրոֆ. Յու. Ավետիսյանը նշեց, որ թեմայի իրականացման առաջին երկու եռամսյակները եղել են աշխատանքները համակարգելու ժամանակահատվածներ: Այս ընթացքում կատարվել են նյութերի հավաքում, մշակում: Հաջորդ երկու եռամսյակում կատարվել է հավաքված նյութի դասակարգում: Հնարավորինս օգտակար և ճշգրիտ արդյունք ստանալու նպատակով կազմակերպվել են նեղ մասնագիտական քննարկումներ, լսումներ, կատարվել են առաջարկություններ, դիտարկումների վերլուծություն: Պարզաբանվել են առավել տարածված տարբերակները, հետազոտության ընթացքում ծագած խնդրահարույց հարցերը: Ի մի է բերվել հետազոտության ընթացքում ամբարված նյութը, ճշգրտվել են կանոնարկվելիք կոնկրետ իրողությունները, բացառվել են բառապաշարի ներքին օրինաչափություններին հակասող և հետագա զարգացումը խոչընդոտող իրողությունները: Բառապաշարի զարգացման և կանոնարկման խնդիրները բազմազան են և տարակողմ, հետևաբար հեղինակային խումբը չի մնացել իր նշած գործունեության շրջանակում:

Դատական համակարգի ներկայացուցիչների հետ քննարկումների արդյունքում 2019 թ. համահեղինակությամբ հրատարակվել է «Իրավաբանական գրագրության լեզուն» (հեղ.՝ Յու. Ավետիսյան, Լ. Սարգսյան, Ա. Մկրտչյան) մենագրությունը, որի մի զգալի հատված նվիրված է մասնագիտական խոսքում բառընտրության, բառագործածության հարցերին: Գիրքը հրատարակվել է ԵՊՀ միջոցներով, քանի որ դրա համար թեմատիկ ֆինանսավորման նախահաշվով որևէ հատկացում նախատեսված չէ: Նույն տարում այն

վերահրատարակվել է GIZ-ի ֆինանսավորմամբ (500 օրինակ), քանի որ դատական համակարգին անհրաժեշտ ձեռնարկ էր:

Թեմայի ղեկավար Յու. Ավետիսյանը համահեղինակությամբ տպագրության է պատրաստել «Հայերենի հոմանիշների ուսումնական բառարան», որում ընդգրկված են հայերենի արդի շրջանում ստեղծված բազում նոր բառեր (նորակազմություններ, նորագույն փոխառություններ): Հեղինակային խումբը 2019 թ. դեկտեմբերի 18-ին անցկացրել է հանրապետական գիտաժողով՝ «Արդի հայերենի բառապաշարի զարգացման և կանոնարկման հիմնախնդիրներ» խորագրով և 2020 թ. երկրորդ եռամսյակում հրատարակել գիտաժողովի հոդվածների ժողովածուն:

Երկրորդ տարվա երրորդ եռամսյակում աշխատանքային խումբը հրատարակել է «Արդի հայերենի բառապաշարը. զարգացման միտումներ, հիմնախնդիրներ» կոլեկտիվ մենագրությունը, որում հանգամանորեն անդրադարձ է արվում վերջին 10-15 տարիներին հայոց լեզվի բառապաշարի զարգացման խնդիրներին, միտումներին:

Հեղինակային խումբը տպագրել է 2 կոլեկտիվ մենագրություն, գիտաժողովի հոդվածների 1 ժողովածու, 9 հոդված (ԲՈԿ-ով հաստատված պարբերականներում), 3 գեկուցում: Մեկ բառարան (համահեղինակությամբ) գտնվում է տպագրության փուլում: Ըստ էության, հեղինակային խումբը իրականացրել է առավել մեծ աշխատանք, քան նախապես ներկայացված էր գիտական ֆինանսավորման հայտում: Ծրագրի շրջանակում խումբը ձեռք է բերել մեկ նոութբուք, մեկ համակարգիչ: Նաև՝ նախատեսված գումարներից 153.000 դրամ (գրենական, գրասենյակային պարագաների և տպագրական ծախսերի համար նախատեսված գումարներից) վերադարձրել է ՀՀ ԳՊԿ-ին:

Գիտական ուսումնասիրությունը կատարելու համար լուրջ խոչընդոտներ չեն եղել, ՀՀ ԳՊԿ-ն ընդառաջել է բոլոր հարցերում:

ՈՐՈՇԵՑԻՆ – Գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորմամբ իրականացվող «Արդի հայերենի բառապաշարի զարգացման և կանոնարկման հիմնախնդիրներ» թեմայի կատարման ընթացքը համապատասխանում է ներկայացված օրացուցային պլանին, հեղինակային խումբը լիարժեք

կատարել է իր ներկայացրած ծրագիրը, հետևաբար ընդունել և հաստատել հաշվետվությունը:

Հարցի առիթով մյուս զեկուցողը՝ պրոֆ. **Ա. Աբաջյանը**, նկատեց, որ ՀՀ ԿԳՄՄՆ գիտության կոմիտեի պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման «Գրաբարյան դարձվածքների ձևախմբատային և կառուցվածքային քննություն. դրանց դրսևորումները արդի արևելահայերենում» թեմայի (ծածկագիր՝ 18T-6B138, ղեկավար՝ Բ. Գ. Դ., պրոֆ. Աննա Հենրիկի Աբաջյան, կատարողներ՝ Բ. Գ. Թ. Ա. Յուզբաշյան, Բ. Գ. Թ. Ն. Դիլբարյան, ասպիրանտ՝ Ք. Հարությունյան) վերաբերյալ հաշվետու ժամանակահատվածում՝ 01.09. 2018-31.08.2020 նախատեսված օրացուցային պլանի համաձայն իրականացվել են հետևյալ աշխատանքները՝

ա. Աշխատանքի առաջին տարում քարտագրվել են սկզբնաղբյուր ծառայող գրաբարյան երկերի (5-18-րդ դար) դարձվածքները՝ համեմատելով Համաբարբառների (եթե այդպիսիք կան) տվյալների հետ, ստուգվել գրաբարի 7-8 բառարաններով, համադրվել այնտեղ արձանագրված իմաստները բնագրային օրինակների ընձեռած նյութի հետ, կազմվել յուրաքանչյուր երկի դարձվածքների շտեմարան:

բ. Երկրորդ տարվա առաջին 2 եռամսյակում դարձվածային այս արդեն մշակված ամբողջական շտեմարանը կառուցվածքային, քերականական, ոճական և իմաստաբանական քննության է ենթարկվել՝ վեր հանելով օրինաչափություններն ու առանձնահատկությունները: Դարձվածքները հետազոտվել են իբրև երկպլանային միավորներ՝ արտահայտության և բովանդակության մակարդակներում, քննվել և՛ համաժամանակյա, և՛ տարածամանակյա մոտեցմամբ, բացահայտվել գրաբարից մինչև արդի գրական արևելահայերեն ընկած ժամանակահատվածում հայերենի բառապաշարում և լեզվամտածողության մեջ կատարված տեղաշարժերը:

Միաժամանակ ինչպես առաջին, այնպես էլ այս փուլում աշխատանքի արդյունքները ամփոփվել են հոդվածների և զեկուցումների ձևով:

գ. Երկրորդ տարվա 3-րդ եռամսյակում կատարվել են բոլոր ուսումնասիրությունների ամբողջացում, ստուգումներ, բացթողումների շտկում, քննարկումներ, իսկ վերջին

եռամսյակը տրամադրվել է այս ամենի հիման վրա աշխատանքի հրատարակության նախապատրաստման և տպագրման աշխատանքներին:

Խուսիքն աշխատանքն իրականացնելիս ճշտորեն հետևել է սահմանված օրացուցային պլանին և նախահաշվին. ձեռք են բերվել համապատասխան տեխնիկական միջոցները, պահպանվել կատարման ժամկետները:

«Գրաբարյան դարձվածքների ձևախմաստային և կառուցվածքային քննություն. դրանց դրսևորումները արդի արևելահայերենում» թեմայի ուսումնասիրության արդյունքները ներկայացած են գիտական հանդեսներում 8 հոդվածով, գիտաժողովներում՝ 3 զեկուցմամբ և 1 գրքով:

ՈՐՈՇԵՑԻՆ - Նկատի ունենալով «Գրաբարյան դարձվածքների ձևախմաստային և կառուցվածքային քննություն. դրանց դրսևորումները արդի արևելահայերենում» թեմայի (ծածկագիր 18T-6B138, գիտ. դեկավար՝ բ. գ. դ., պրոֆ. Աննա Աբաջյան)՝ հաշվետու ժամանակամիջոցում կատարված պատկառելի աշխատանքները՝ դրանք գնահատել միանգամայն դրական:

Օրակարգի **երրորդ հարցը** նվիրված էր ամբիոնների կողմից ներկայացվող դասագրքերի, գիտական աշխատանքների, ժողովածուների քննարկմանը:

ԼՍԵՑԻՆ – Ակադեմիկոս Հրանտ Թամրազյանի անվան հայ գրականության պատմության ամբիոնի պրոֆ., բ. գ. դ. **Ալբերտ Արշավիրի Մակարյանի** «Գրականագիտության տիրույթներում» ուսումնասիրությունների ժողովածուն տպագրության երաշխավորելու հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. – Պրոֆ., պրոֆ. Ս. Մուրադյանը, Վ. Սաֆարյանը, Ալ. Մակարյանը, դոց., դոց. Ռ. Էլոյանը և Ա. Ջրբաշյանը:

Նշվեց, որ պրոֆ. Ալբերտ Արշավիրի Մակարյանի «Գրականագիտության տիրույթներում» ժողովածուն հեղինակի՝ տարբեր տարիներին գիտական պարբերականներում լույս տեսած աշխատությունների ժողովածու է, որն ընդգրկում է գրականագիտական ամենատարբեր երևույթների ուսումնասիրություններ: Ընդ որում՝ այն բաղկացած է երկու մասից. առաջին մասը ներառում է սոսկ հեղինակային ուսումնասիրություններ, երկրորդը՝ համահեղինակային, որն այսօր շատ ընդունված է եվրոպական գիտական շրջա-

նակներում: Ժողովածուի գիտական խմբագիրն է Բ. Գ. Թ. Տաթևիկ Մերջանյանը, գրախոսները՝ Բ. Գ. Դ., պրոֆ. Վ. Սաֆարյանը և Բ. Գ. Թ., դոց. Ա. Ջրբաշյանը:

Ալ. Մակարյանի աշխատությունն անպայման օգտակար կարող է լինել թե՛ ուսանողների և թե՛ գիտական ու գրական շրջանակների համար:

ՈՐՈՇԵՑԻՆ – Ակադեմիկոս Հրանտ Թամրազյանի անվան հայ գրականության պատմության ամբիոնի պրոֆ., Բ. Գ. Դ. **Ալբերտ Արշավիրի Մակարյանի** «Գրականագիտության տիրույթներում» ուսումնասիրությունների ժողովածուն երաշխավորել տպագրության:

ԼՍԵՑԻՆ - Ակադեմիկոս Հրանտ Թամրազյանի անվան հայ գրականության պատմության ամբիոնի պրոֆ., Բ. Գ. Դ. **Վազգեն Հմայակի Սաֆարյանի** «Գրողի և կերպարի անհատականությունը» մենագրությունը տպագրության երաշխավորելու հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. – Պրոֆ., պրոֆ. Ա. Ավագյանը, Ս. Մուրադյանը, Վ. Սաֆարյանը, Ալ. Մակարյանը և դոց. Ռ. Էլոյանը:

Նշվեց, որ պրոֆ. Վ. Սաֆարյանի մենագրության մեջ գրական նյութի համադրական վերլուծությամբ կարևոր ընդհանրացումներ են արվում գրողի ստեղծագործական գործընթացի յուրահատուկ կողմերի, դրա հետ կապված՝ գրական ուղղությունների և կերպավորման առանձնահատկությունների մասին: Ասելիքի գիտական ընդգրկումը շեշտվում է նրանով, որ քննության նյութ են դառնում ուշ ռոմանտիզմի ներկայացուցիչ Մուրացանի և հոգեբանական ռեալիզմի հետևորդ Նար-Դոսի ստեղծագործությունները: Եթե առաջինի դեպքում անթաքույց է հեղինակի գաղափարների ներմուծումը կերպարի մեջ, ապա ռեալիստ գրողը միտումնավոր խուսափել է երևալ հերոսների մեջ, իսկ գաղափարները ներկայացրել է հնարավորինս քողարկված և ոչ ուղղակի: Սակայն երկու այդ գրողների բնավորությունների էական շերտերը փոխանցվել են մի շարք կերպարների մեջ: Աշխատանքի կարևոր արժանիքը այդ շերտերի հոգեբանական ընդհանրացումներն են և դրանց կատարման գեղարվեստական ընթացքի խորը վերլուծական բացահայտումները:

Վ. Սաֆարյանի մենագրությունն անպայման օգտակար կարող է լինել թե՛ ուսանողների և թե՛ գիտական ու գրական շրջանակների համար:

ՈՐՈՇԵՑԻՆ – Ակադեմիկոս Հրանտ Թամրազյանի անվան հայ գրականության պատմության ամբիոնի պրոֆ., ք. գ. դ. **Վազգեն Հմայակի Սաֆարյանի** «Գրողի և կերպարի անհատականությունը» մենագրությունը երաշխավորել տպագրության:

ԼՄԵՑԻՆ – «Հայոց լեզու և խոսքի մշակույթ» (բուհերի բնագիտական ֆակուլտետների համար) ձեռնարկը տպագրության երաշխավորելու հարցը: Հեղինակներն են՝ պրոֆ. Յու. Ավետիսյան, դոց., դոց. Գ. Ներսեսյան, Շ. Գևորգյան և ասիստ. Ս. Գաբրիելյան:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ – Պրոֆ., պրոֆ. Ա. Ավագյանը, Յու. Ավետիսյանը, դոց., դոց. Ա. Տեր-Մինասյանը, Մ. Ֆելեքյանը, Թ. Տոնոյանը և Լ. Թելյանը:

Նշվեց, որ ձեռնարկի տեսական հատվածը շարադրված է արդեն հրատարակված նույնանուն դասագրքի հիման վրա, սակայն վերլուծությունները, բերված օրինակները բնագիտական ուղղվածության են: Տեսական նյութին զուգահեռ՝ ձեռնարկում զետեղված են առաջադրանքներ և վարժություններ, որոնք առավել արդյունավետ կարող են դարձնել նյութի մատուցումը և յուրացված գիտելիքների ամրապնդումը: Գործնական առաջադրանքները հնարավորություն են ստեղծում, որ ուսանողներն ինքնուրույն աշխատանք կատարեն, նյութը խորությամբ ըմբռնեն և սեփական եզրակացություններն անեն:

Տեսական հատվածի շարադրանքը և նյութի մատուցման խորությունը մասնագիտական պատշաճ մակարդակով են կատարված, վարժություններն ու առաջադրանքները լավագույնս կարող են նպաստել ուսանողների խոսքի մշակույթի զարգացմանը:

Աշխատանքի խմբագիրն է ք. գ. դ., պրոֆ. Յուրի Ավետիսյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ – Հիմք ընդունելով նիստի մասնակիցների կարծիքները՝ «Հայոց լեզու և խոսքի մշակույթ» (բուհերի բնագիտական ֆակուլտետների համար) ձեռնարկը երաշխավորել տպագրության:

ԸՆԹԱՑԻՎ ՀԱՐՑԵՐՈՒՄ՝

Լ Ս Ե Ց Ի Ն - Հայ բանասիրության ֆակուլտետի «Հայոց լեզու և գրականություն» մասնագիտության «Հայ գրականություն» մագիստրոսական ծրագրի առկա ուսուցման 2-րդ կուրսի ուսանող **Արշակ Անդրանիկի Պողոսյանին** «Հակոբ Կարապենց» միանվագ կրթաթոշակի առաջադրման հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ - Պրոֆ., պրոֆ. Ալ. Մակարյանը, Յու. Ավետիսյանը, Ս. Մուրադյանը և Վ. Սաֆարյանը:

Ո Ր Ո Շ Ե Ց Ի Ն - Երաշխավորել **Արշակ Անդրանիկի Պողոսյանին**՝ մասնակցելու «Հակոբ Կարապենց» միանվագ կրթաթոշակի տրամադրման մրցույթին:

Լ Ս Ե Ց Ի Ն - Հայ բանասիրության ֆակուլտետի «Հայոց լեզու և գրականություն» մասնագիտության «Ժամանակակից հայոց լեզու և թարգմանչական գործ» մագիստրոսական ծրագրի առկա ուսուցման 2-րդ կուրսի ուսանող **Վալտեր Տիգրանի Բերբերյանին** «Լավագույն ուսանող» հանրապետական մրցույթի առաջադրման հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ - Պրոֆ., պրոֆ. Ա. Ավագյանը, Յու. Ավետիսյանը, Ս. Մուրադյանը և Վ. Սաֆարյանը:

Ո Ր Ո Շ Ե Ց Ի Ն - Երաշխավորել **Վալտեր Տիգրանի Բերբերյանին**՝ մասնակցելու «Հայաստանի Հանրապետության բարձրագույն մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների լավագույն առաջադիմությամբ ուսանողների անվանական կրթաթոշակների տրամադրման» մրցույթին:

Լ Ս Ե Ց Ի Ն – Հայ նորագույն գրականության ամբիոնի շրջանավարտ, բան. գիտ. թեկնածու, դոցենտ **Արմեն Ավանեսի Ավանեսյանի** դոկտորական ատենախոսության թեմայի հաստատման հարցը:

Ա Ր Տ Ա Հ Ա Յ Տ Վ Ե Ց Ի Ն. – Պրոֆ., պրոֆ Ա. Ավագյանը, Վ. Գաբրիելյանը, Ժ. Քալանթարյանը, Ալ. Մակարյանը, դոց., դոց. Ս. Գրիգորյանը և Ա. Ջրբաշյանը:

Նշվեց, որ դոցենտ Ա. Ավանեսյանը արդեն երկար տարիներ զբաղվում է ժամանակակից հայ գրականության տարաբնույթ հարցերով: 2010 թվականին նա պաշտպանել է «Արդի հայ դրամատուրգիայի հիմնախնդիրները» թեմայով ատենախոսություն և ստացել բանասիրական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան: Հեղինակ է 30-ից ավելի գիտական հոդվածների և երկու մենագրությունների՝ «Արդի հայ դրամատուրգիա (1991-2008 թվականներ)» (2011) և «Անկախության պոեզիա. XXI դար» (2017): Վերջին շրջանում Ավանեսյանը զբաղվում է 20-րդ դարի երկրորդ կեսի և անկախության շրջանի հայտնի արձակագիր Վահագն Գրիգորյանի ստեղծագործությամբ: Այն աչքի է ընկնում կերպարային համակարգի, սյուժեի և ոճի ինքնատիպ լուծումներով, որոնք ենթակա են գրականագիտական խոր հետազոտության:

Ատենախոսության թեմա առաջարկվեց «Վահագն Գրիգորյանի արձակի պոետիկան»: Առաջադրվող թեման արդիական է և ներկայացնում է գիտական լուրջ հետաքրքրություն:


ՈՐՈՇԵՑԻՆ – Հաստատել **Արմեն Ավանեսյանի** դոկտորական ատենախոսության թեման՝ «Վահագն Գրիգորյանի արձակի պոետիկան»:

Նախագահողը վերջում շնորհակալություն հայտնեց բոլորին և նիստը համարեց
փակված:

ՆԻՍՏԻ ՆԱԽԱԳԱՀ

ՊՐՈՖ. Ա. ԱՎԱԳՅԱՆ

ԳԻՏՔԱՐՏՈՒՂԱՐ



ՊՐՈՖ. ԱԼ. ՄԱԿԱՐՅԱՆ